ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 2093 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ԴՊՐՈՑՆԵՐ»- Ի ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ՝ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերությունները և 3-րդ պարբերության 1-ին, 2-րդ ենթակետերի պահանջները և ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8.2-րդ կետի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը՝ ներառյալ հաստատության

տեսակի, հզորության, շինարարական աշխատանքների՝ սույն որոշման N 2 հավելվածով հաստատված չափորոշիչների հիման վրա ընտրված միջամտության աստիճանի, ինչպես նաև պատվիրատու մարմնի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման N 1 հավելվածում ներառված դպրոցների՝ գոյություն ունեցող շենքերի և օժանդակ շինությունների քանդման աշխատանքներից ձևավորվելիք արդյունքը համարվում է տվյալ աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունների սեփականություն: Ընդ որում՝ քանդման (ներառյալ շենք-շինությունների հիմքերի) աշխատանքները և դրանց արդյունքում առաջացած աղբի տեղափոխումն ընտրված կապալառու կազմակերպության կողմից իրականացվում են անհատույց՝ սեփական միջոցների հաշվին.

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ N 1 հավելվածում ներառված դպրոցների՝ գոյություն ունեցող շենք–շինությունների քանդման դեպքում շինարարական աշխատանքների մեկնարկից 1 ամիս առաջ լուծել տվյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը.

3) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին (առաջարկությամբ)՝

ա. ապահովել սույն որոշման N 1 հավելվածում ներառված դպրոցների հաշվեկշռում գտնվող գույքի (բացառությամբ շենքերի և շինությունների) պահպանման աշխատանքները՝ մինչև տվյալ դպրոցների փոխարեն նոր դպրոցների կառուցման ավարտը,

բ. մինչև սույն որոշման N 1 հավելվածում ներառված դպրոցների փոխարեն նոր դպրոցների կառուցման աշխատանքների ավարտն ապահովել այդ դպրոցների աշակերտների՝ հանրակրթական ծրագրերով բնականոն ուսուցման կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ